«ԱՐԱՐԱՏ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.

«Արարատ»-ը հայ եկեղեցու միակ պաշտօնական, կրօնա-բարոյական ազգային ամսագիրն է և նպատակ ունի պարզաբանելու, արծարծելու հայ եկեղեցու և ժողովրդի կրօնա-բարոյական և ազգային կեանքի բարելաւման և յառաջադիմութեան նպաստող հարցերը։

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կենդանի կապ պահպանել հայ եկեղեցու և «Արարատ»-ի խմբագրութեան մէջ պարբերաբար տեղեկագրեր, ուսումնասիրութիւններ, դիտողութիւններ, լուրեր ուղարկելով խմբագրութեանը։

Յատկապէս հայ ժողովրդին հասած մեծ աղէտի այս ծանր ժամանակում այդ կապի կարիքն առաւել ևս զգացւում է։

Խմբագրութիւնը թերթի էջերը լայն բաց անելով մեծ տառապանքի ենթակայ հայ եկեղեցու ու ժողովրդի կարիքները պարզաբանող, լուսաբանող հարցերի համար, խնդրում է բոլոր հայ հոգևոր հաստատութիւններին և կարող անձանց ուղարկել՝

1. Տարեկան տեղեկագրեր թեմի եկեղեցիների, վանքերի, ազգային և աստուածահաճոյ հիմնարկութիւնների. միջնակարգ և տարրական դպրոցների.

2. Ազգագրական, ժողովրդագրական, պատմական, գրական-բանասիրական նիւթեր.

3. Գաղթականների, և սրանց համար բացուած որբանոց-դպրոցների հիւանդանոցների, արհեստանոցների և այլ ձեռնարկների.

4. Գաղթականներին օգնող զանազան հիմնարկութիւնների գործունէութեան տեղեկագրեր և հաշիւներ.

Խմբագրութիւնը ստացած նիւթերը քննութեան առնելուց յետոյ յարմարները կտպագրէ, վճարելով՝ ինքնուրոյն աշխատանքների համար տպագրական մէկ երեսին մէկ ռ., թարգմանականին՝ 75 կ. տպագրութեան համար անյարմար ճանաչուած յօդուածները կվերադարձրուին հեղինակներին ճանապարհածախքն ստանալուց յետոյ։

Խմբագրութիւն.

ԱՅԴ

Ս. Էջմիածնի Տպարանի Վարչութիւնը խրնդրում է այն բոլոր հիմնարկութիւններին և անհատներին, որոնց վրայ ապառիկներ կան՝ „Արարատ"-ի բաժանորդներից, օրացոյցների, եկեղեցական այլ և այլ մատեանների և գրքերի գներից շուտափոյթ փոխադրել գումարները, հաշիւները փակել և գրագրութիւնների տեղիք չտալ։

Վարչութիւն Տպարանի.

Լոյս տեսաւ եւ վաճառւում է

ՀԱՒԱՔԱՐԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԱՂԹԱՄԱՐԱՑ

Ծանօթութիւններով լոյս ընծայեց Աղթամարեան աթոռի հիմնարկութեան հազարամեակի առթիւ,

Մեսրոպ վ. Մաքսուդեան

Գինն է 60 կ.

Հրատարակութիւն Մայր Աթոռի.